

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Նկարում պատկերված է.

- 1) օդի ճնշման նվազումը՝ ըստ բարձրության
- 2) 1մ^3 օդում առկա թունավոր գազերի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
- 3) օդի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
- 4) թթվածնի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության



2 Հյուսիսային բևեռային շրջագծի և նրանից հարավ գտնվող Ա կետով անցնող գուգահեռականի միջև իրական ամենակարճ հեռավորությունը կազմում է 2664 կմ: Ա կետի աշխարհագրական լայնությունը կլինի.

- 1) հս.լ 36,5°
- 2) հս.լ 24,5°
- 3) հս.լ 28,5°
- 4) հս.լ 42,5°

3 Երկու կետերի ուղիղ գծով հեռավորությունը քարտեզի վրա 16սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1:2400000: Երկու կետերի իրական հեռավորությունը կլինի.

- 1) 384 կմ
- 2) 3840կմ
- 3) 150կմ
- 4) 15կմ

4 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները (գետեր, քամիներ և այլն) շեղվում են իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում՝ դեպի աջ, հարավայինում՝ ձախ:
- 2) Երևանի գոտիական ժամանակը առաջ է Տոկիոյի գոտիական ժամանակից:
- 3) Հասարակածի աշխարհագրական լայնությունը 90° է, իսկ բևեռներինը՝ 180°:
- 4) Հունիսի 22-ից մինչև սեպտեմբերի 21-ը հս.լ 66°300'-ից հյուսիս բևեռային ցերեկների տևողությունը կրճատվում է:

5 Այն օդը, որն իր մեջ եղած ջրային գոլորշիներից ավելին չի կարող ընդունել կոչվում է.

- 1) մառախուղ
- 2) չոր օդ
- 3) հագեցած օդ
- 4) ամպ

6 Երկու ջրամերժ շերտերի միջև գտնվող ստորերկրյա ջրերը կոչվում են.

- 1) հանքային
- 2) միջշերտային
- 3) քաղցրահամ
- 4) գրունտային


7 Քարտեզի վրա հավասար մթնոլորտային ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է.

- 1) իզոհիպս
- 2) իզոբար
- 3) իզոբաթ
- 4) իզոթերմ

8 Երևան քաղաքում հունվարի 10-ին դիտվել է հետևյալ օդի ջերմաստիճանները՝ -5° , -9° , -6° , -4° , 3° , 5° , 2° , -2° : Օդի օրական միջին ջերմաստիճանը կլինի.

- 1) 3°
- 2) -2°
- 3) -4°
- 4) 2°


9 Ռելիեֆի կտրվածքի ո՞ր կետում են թափվում ամենաշատ տեղումներ:



- 1) P
- 2) Q
- 3) R
- 4) U

10 Նկարում պատկերված է Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ.

- 1) սեպտեմբերի 23-ին
- 2) դեկտեմբերի 22-ին
- 3) մարտի 21-ին
- 4) հունիսի 22-ին



11 Բարեխառն ծովային կլիման բնորոշ է.

- 1) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան մասերին
- 2) Ուրալյան լեռներից արևելք ընկած շրջաններին
- 3) Ավստրալիայի ծայր հարավ-արևմտյան մասին
- 4) Պատագոնիայի արևելյան առափնյա շրջաններին

12 Ո՞ր բնական զոնային են առավելապես բնորոշ քանու ներգործության շնորհիվ ստեղծված ռելիեֆի ձևերը:

- 1) անապատների և կիսաանապատների
- 2) հասարակածային խոնավ, մշտադալար անտառների
- 3) բարեխառն գոտու անտառների
- 4) սավանաների և նոսրանտառների

13 Այդ կղզու գրեթե կենտրոնով է անցնում հասարակածը: Այդ կղզին Մալակկայի նեղուցով բաժանվում է Մալակկա թերակղզուց: Այդ կղզին է.

- 1) Սումատրան
- 2) Ճավան
- 3) Սուլավեսին
- 4) Կալիմանտանը

14 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Կալիֆոռնիական սառը հոսանքի ազդեցության շնորհիվ առափնյա շրջաններում թափվում են առատ տեղումներ:
- 2) Մեծ Արջի, Մեծ Ստրուկների լճերը առաջացել են գետահունների լավային արգելափակման հետևանքով:
- 3) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային ծովեզերքին՝ հարակից կղզիների տարածքում, տարածվում է խառը և լայնատերև անտառների զոնան:
- 4) Հյուսիսային Ամերիկայում լայնակի ձգվող լեռների բացակայության շնորհիվ օդային զանգվածները ազատ շրջանառություն են կատարում՝ երբեմն առաջացնելով հզոր պտտահողմեր:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330 մմ:

77 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:


(79-80) Երկրի բնակչության թիվը 40 000 000 է, քաղաքաբնակների բացարձակ թիվը՝ 16 000 000, տարածքի մակերեսը՝ 200 000 կմ²:

79 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

80 Որոշել բնակչության միջին խտությունը:

75

Քարտեզի վրա ՀՀ հողային ո՞ր տիպն է նշված Ա տառով:



- 1) անապատակիսաանապատային
- 2) աղուտ-ալկալի հողեր (աղուտներ)
- 3) լեռնային սևահողեր
- 4) կուլտուր-ռոռոզեի հողեր

76

Որոշել գետի հոսքը 1 ժամում, եթե գետի ջրի արագությունը 1.5 մ/վ է, իսկ գետահունի լայնակի կտրվածքի մակերեսը 6մ²:

15

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ավստրալիայի մակերևույթի հիմքում ընկած է Ավստրալիական հնագույն պլատֆորմը:
- 2) Ամենաշատ տեղումներ ստանում են Մեծ Ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի հողմակողմ լանջերը:
- 3) Էվկալիպտները տարածվում են բացառապես անապատների և կիսանապատների զոնայում:
- 4) Ավստրալիայի հյուսիս-արևելյան ափերը ողողող Կորալյան ծովի մակերևութային տաք ջրերում բուռն զարգանում են կորալային պոլիպները:

16

«Նեղուց-դրանով բաժանված կղզի» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Բար-Էլ-Մանդեբի-Մադագասկար
- 2) Թորեսի-Թայվան
- 3) Բերինգի-Գրենլանդիա
- 4) Մագելանի-Հրո Երկիր

17

«Լեռնային համակարգ-լեռնագագաթ» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Անտարկտիկական Անդեր-Ակոնկագուա
- 2) Ապալաչներ-Կոսցյուշկո
- 3) Էլբուրս-Դեմավենդ
- 4) Մեծ Կովկաս-Արարատ

18

Ասիա աշխարհամասում հոսող գետեր են.

- 1) Դնեպրը և Դոնը
- 2) Վոլգան և Դանուբը
- 3) Թեմզան և Հռենոսը
- 4) Օբը և Ինգուրին

19


Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Վիկտորիա լիճը:

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա

20

Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Պրետորիա մայրաքաղաքը:

- 1) Զ
- 2) Է
- 3) Ը
- 4) Ե



21 Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումը և վերաբաշխումը՝ ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի կոչվում է.

- 1) ուրբանիզացում
- 2) բնակչության տեղաբաշխում
- 3) տարաբնակեցում
- 4) միգրացիա

22 Բնական շարժի հետևանքով մարդկանց սերունդների անընդհատ վերարտադրության և հերթափոխման գործընթացի ամբողջությունը կոչվում է.

- 1) ժողովրդագրական ճգնաժամ
- 2) բնակչության վերարտադրություն
- 3) բնակչության մեխանիկական շարժ
- 4) ժողովրդագրական պայթյուն

23 Հարավ-Արևելյան Ասիայի այդ երկիրն ամբողջությամբ ընկած է կղզիների վրա: Բնակչության մեծ մասը դավանում է քրիստոնեություն: Այդ երկրում կաուչուկի հումք են ստանում նաև կոկոսյան արմավենուց: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Ֆիլիպիններ
- 2) Բրունեյ
- 3) Սյամմա
- 4) Ինդոնեզիա

24 Երկրում ածխի պաշարները կազմում են 2,4մլրդ. տ: Արդյունահանման տարեկան չափը պահպանելու դեպքում այն կբավականացնի 375 տարի: Որքա՞ն է ածխի արդյունահանման տարեկան չափը (արտահայտած՝ տոննայով):

- 1) 1562500
- 2) 2025000
- 3) 1350000
- 4) 6400000

25 «Պետություն – տիրապետող կրոն» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:

- 1) Ադրբեջան-մահմեդականություն
- 2) Ճապոնիա-սինտոիզմ
- 3) Վրաստան-քրիստոնեություն
- 4) Իրան-հուդայականություն


26 «Պետություն-պատկանող կղզի» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:

- 1) Դանիա-Գրենլանդիա
- 2) Հունաստան-Կիպրոս
- 3) Ավստրալիա-Թասմանիա
- 4) Ֆրանսիա - Կորսիկա

27 «Հողաբարելավման միջոցառում-բնական օբյեկտ» սկզբունքով տրված գույգերից ո՞րն է սխալ:

- 1) քիմիական մելիորացում-աղուտներ
- 2) արհեստական ոռոգում-մշակովի հողեր
- 3) հակաէրոզիոն միջոցառում- ձյունամերձ լանդշաֆտներ
- 4) չորացում (ցամաքեցում)- գերխոնավ հողեր

74 Տրվածներից ո՞րն է զբաղեցնում քարտեզի վրա Ա տառով նշված տարածքները:



- 1) տունդրան և անտառատունդրան
- 2) արկտիկական անապատները
- 3) անտառատափաստանները և տափաստանները
- 4) փշատերև անտառները

69 **Ի՞նչն է ընդհանուր Գյումրի և Հրազդան քաղաքների համար:**

- 1) նրանց միջով է հոսում Հրազդան գետը
- 2) գործում են հզոր ջերմաէլեկտրակայաններ
- 3) գործում են ցեմենտի արտադրության խոշոր ձեռնարկություններ
- 4) երկաթուղային հանգույցներ են

70 **ՀՀ տրված մարզերից որի՞ տարածքում է գտնվում «Դիլիջան» ազգային պարկը:**

- 1) Տավուշի
- 2) Շիրակի
- 3) Արարատի
- 4) Սյունիքի

71 **Ո՞ր գույգում են տրված խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհի առաջատար երկրները:**

- 1) Հնդկաստան և Բրազիլիա
- 2) Թուրքիա և Աֆղանստան
- 3) Իրան և Մոնղոլիա
- 4) Ճապոնիա և Ղազախստան

72 **Տրվածներից ո՞րն է մթնոլորտի աղտոտման հետևանք:**

- 1) էրոզիոն երևույթների զարգացում
- 2) գերխոնավ հողերի բերրիության անկում
- 3) ջերմոցային էֆեկտի առաջացում
- 4) սառերերկրյա ջրերի մակարդակի բարձրացում

73 **Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Ջերմոցային էֆեկտի հետևանքով բարձրանում է ներքնոլորտի տարեկան միջին ջերմաստիճանը:
- 2) Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուրներից է մետաղաձուլությունը:
- 3) Ջրավազաններն աղտոտող հիմնական նյութերը աերոզոլներն(օդակախույթ) են:
- 4) Անտառապատ տարածքների կրճատումն ուղեկցվում է գենոֆոնդի աղքատացմամբ:

28 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Վրացիները կազմում են երկրի բնակչության մոտ 98%-ը:
- 2) Վրաստանում տեղական մանգանի, ներմուծվող երկաթի հիման վրա աշխատում է Ռուսթավի լիքվ ցիկլի մետալուրգիական կոմբինատը:
- 3) Վրաստանի մակերևույթում ընդարձակ հարթավայրերի շնորհիվ գյուղատնտեսական հանդակները զբաղեցնում են երկրի հողային ֆոնդի 90%-ը:
- 4) Վրաստանի կլիման արևելքում խոնավ է, արևմուտքում՝ չորային:

29 **Բնակչության բնական աճի ավելացման ուղղությամբ առավել ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն են վարում.**

- 1) Չինաստանը և Պակիստանը
- 2) Ֆրանսիան և Գերմանիան
- 3) Նիգերիան և Սուդանը
- 4) Ինդոնեզիան և Հնդկաստանը

30 **Խորհրդարանական հանրապետություններ են.**

- 1) Ֆրանսիան և Հունաստանը
- 2) Ռուսաստանը և Վրաստանը
- 3) Ադրբեջանը և Բրազիլիան
- 4) Իտալիան և Իսրայելը

31 **«Պետություն-էլեկտրաէներգետիկայի մասնագիտացման ճյուղ» սկզբունքով կազմված գույգերից ընտրել ո՞րն է սխալ:**

- 1) Իսլանդիա-ջերմային էներգետիկա
- 2) Նիդեռլանդներ-ջրային էներգետիկա
- 3) ԱՄՆ-ջերմային էներգետիկա
- 4) Ֆրանսիա-ատոմային էներգետիկա

32 **Ո՞րն պնդումն է ճիշտ:**

- 1) Արվակուլտուրան զարգացած է բարեխառն գոտու տափաստանների ու նոսրանտառների զոնայում:
- 2) Մերձարևադարձային և արևադարձային երկրները մասնագիտանում են ցիտրուսային պտուղների մշակման գծով:
- 3) Աշխարհում խոզերի գլխաքանակի շուրջ 50%-ը բաժին է ընկնում Ասիայի մահմեդական երկրներին (Իրան, Սաուդյան Արաբիա և այլն):
- 4) Հացահատիկ արտահանող երկրներից են Եգիպտոսը, Ճապոնիան, Բրազիլիան, Հայաստանը:

33 **Կյանքի միջին տևողության ցածր ցուցանիշներ ունեն.**

- 1) Շվեդիան և Շվեյցարիան
- 2) Ճապոնիան և Ֆրանսիան
- 3) Ավստրալիան և Նոր Զելանդիան
- 4) Մոզամբիկը և Անգոլան

34 **Աշխարհում մավթ արտահանող առաջատար երկրներ են.**

- 1) Վենեսուելան և Նորվեգիան
- 2) Ֆրանսիան և Շվեյցարիան
- 3) Ուկրաինան և Թուրքիան
- 4) Իտալիան և Հունաստանը

35 **Տրված լճերից ո՞րն ունի սառցադաշտային ծագում:**

- 1) Քարի լիճը
- 2) Ուրմիա լիճը
- 3) Պարզ լիճը
- 4) Փարվանա լիճը

36 **Տրված «լեռներ-ծագում» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:**

- 1) Բարգուշատի-ծալքաբեկորավոր
- 2) Գուգարաց-հրաբխային
- 3) Արևելյան Սևանի-ծալքաբեկորավոր
- 4) Եղնախաղի-հրաբխային

37 **ՀՀ-ում ամենամեծ արտեզյան ավազանն է.**

- 1) Փամբակինը
- 2) Շիրակինը
- 3) Արարատյանը
- 4) Սիսիանինը

38 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) ՀՀ-ում առավելագույն տեղումները թափվում են ձմռանը, նվազագույնը՝ մայիս-հունիսին:
- 2) Չոր, խիստ ցամաքային կլիման ձևավորվում է Արարատյան դաշտի մինչև 1000մ բարձրություններում:
- 3) ՀՀ-ում ցածրադիր գոտու համեմատ միջին բարձրության լեռնային գոտում տեղումների քանակը նվազում է՝ հասնելով 230-300մմ:
- 4) Միջերկրական ծովի կողմից եկող օդային զանգվածներն Ադստևի հովտով անցնում են Փամբակի գոգավորություն՝ բերելով շատ խոնավություն:

39 **Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Սևան-Հրազդան ոռոգաէներգետիկ համակարգի միջոցով սնվում են Արարատյան դաշտի մի շարք մայր ջրանցքներ:
- 2) ՀՀ-ում ձկնաբուծությունը զարգանում է նաև Արարատյան դաշտի աղակալած հողերում ստեղծված արհեստական լճակներում:
- 3) ՀՀ ամբողջ տարածքում անասնապահությունը զարգացել է բացառապես բնական արոտային թարմ խոտի բազայի վրա:
- 4) ՀՀ խաղողագործական շրջաններ են Արփայի հովիտը և Զանգեզուրի հարավը (Մեղրի):

40 **ՀՀ-ում ոչ տեղական հումքի վրա հիմնված մետաղաձուլության արտադրություն է.**

- 1) մոլիբդենինը
- 2) պղնձինը
- 3) ալյումինինը
- 4) ոսկունը

63 **Բնութագրումով որոշել երկիրը:**

Հարավ-արևմտյան Ասիայի տարածքի մեծությամբ երկրորդ երկիրն է: Երկրի հարավային ափերը ողողում են Հնդկական օվկիանոսի ջրերը: Բնակչության մեծ մասը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Թուրքիա
- 2) Հնդկաստան
- 3) Աֆղանստան
- 4) Իրան

64 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Մեծ Մասիսից դեպի արևմուտք ձգվում է Հայկական Պար լեռնաշղթան:
- 2) Բացակայում են գործող հրաբուխները:
- 3) Ամենաբարձր գագաթն ունի ավելի քան 5000 մ բարձրություն:
- 4) Շրջապատված է եզրային լեռների համակարգերով:

65 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Գեղամա լեռնավահանը ճառագայթաձև մասնատվել է Գեղարոտի, Ամբերդի խոր հովիտներով:
- 2) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
- 3) Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները մասնատված են Արփայի և Արաքսի գետահովիտներով:
- 4) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են:

66 **Տրվածներից ո՞րն է բնորոշ ՀՀ չոր մերձարևադարձային կլիմայի տիպին:**

- 1) տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 800-900 մմ-ի
- 2) օդի միջին հունվարյան ջերմաստիճանը տատանվում է +10⁰-ի շուրջ
- 3) տարածվում է 1500-2000 մ բարձրություններում
- 4) ձմեռը կարճատև է և մեղմ

67 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:
- 2) Արարատյան դաշտին բնորոշ է գծային տարաբնակեցումը:
- 3) ՀՀ-ն հարևան պետությունների համար բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:
- 4) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:

68 **ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Հացահատկի ցանքատարածություններում գերակշռում է աշնանացան ցորենը:
- 2) Խաղողի մշակության գլխավոր շրջաններից է Լոռու սարահարթը:
- 3) Խաղողի մշակության վերին սահմանը 2100-2200 մ բացարձակ բարձրություններն են:
- 4) ՀՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:

- 57 **Տրված կլիմայական գոտիներից ո՞րն է Եվրասիայում զբաղեցնում ամենամեծ տարածքը:**
- 1) բարեխառն
 - 2) արևադարձային
 - 3) հասարակածային
 - 4) արկտիկական
- 58 **Ո՞ր գույգում տրված անապատներն են գտնվում Հարավային կիսագնդի արևադարձային կլիմայական գոտու սահմաններում:**
- 1) Կարակում և Ավազային Մեծ անապատ
 - 2) Ռուբ Էլ Խալի և Լիբիական անապատ
 - 3) Կալահարի և Ատակամա
 - 4) Սահարա և Թար
- 59 **Ո՞ր գույգում տրված երկրներում է կյանքի միջին տևողության ցուցանիշը ամենացածրը:**
- 1) Ավստրալիա և Կանադա
 - 2) Շվեդիա և Իրան
 - 3) Անգոլա և Չամբիա
 - 4) Ճապոնիա և Նիգերիա
- 60 **Տրված պնդումներից ո՞րն է ուրբանիզացիայի վերաբերյալ տեղեկատվություն (ինֆորմացիա) ներառում:**
- 1) Բնակչության խտության ցուցանիշը տարածքի բացարձակ բարձրության մեծացմանը զուգընթաց նվազում է:
 - 2) Եթե 1900թ. քաղաքներում էր ապրում աշխարհի բնակչության 13.3 %-ը, 1950թ.՝ 29.3%-ը, ապա 2008թ.՝ 50%-ը:
 - 3) Հնդկաստանը, Չինաստանը ունենալով մարդկային և բնական հսկայական ներուժ, այնուամենայնիվ ՀՆԱ-ի 1 շնչի ցուցանիշով զիջում են զարգացած երկրներին:
 - 4) Բնակչության թիվն ու խտությունը մեծ է այն երկրներում ու տարածաշրջաններում, որտեղ բարձր է բնակչության վերարտադրությունը:
- 61 **ՌԴ տրված քաղաքներից ո՞րն է ալյումինի արտադրության խոշոր կենտրոն:**
- 1) Բրատսկ
 - 2) Լիպեցկ
 - 3) Կրասնոդար
 - 4) Իվանովո
- 62 **Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**
- 1) Աշխատանքային ռեսուրսների գերակշիռ մասը ընդգրկված է տնտեսության սպասարկման ոլորտում:
 - 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
 - 3) Արտահանության մոտ կեսը բաժին է ընկնում հանքային հումքին և վառելիքին:
 - 4) Հյուսիսային Եվրոպայում տարածքով ամենամեծ հանրապետությունն է:

- 41 **Արագածոտնի մարզում ո՞ր մայր ջրանցքների շնորհիվ են ընդլայնվել ոռոգովի հողատարածքները:**
- 1) Թալինի և Արզնի Շամիրամի
 - 2) Լոռու և Նալբանդի
 - 3) Մասրիկի և Կոտայքի
 - 4) Շիրակի և Լոռու
- 42 **Տրված մարզերից ո՞րը միայն մեկ մարզի հետ ունի ընդհանուր սահման:**
- 1) Սյունիքի մարզը
 - 2) Շիրակի մարզը
 - 3) Տավուշի մարզը
 - 4) Արմավիրի մարզը
- 43 **Այժմ ՀՀ երկաթուղային ցանցի միջին խտությունը կազմում է մոտ.**
- 1) 25 կմ/1000կմ²
 - 2) 30 կմ/1000կմ²
 - 3) 35 կմ/1000կմ²
 - 4) 22 կմ/1000կմ²
- 44 **Ջրի կենսաբանական մաքրման մեթոդը հիմնված է.**
- 1) մանրէների կենսագործունեության օգտագործման վրա
 - 2) խեցգետինների՝ ջրի մեջ լուծված նյութերով սնվելու վրա
 - 3) հոսող ջրի պոտենցիալ էներգիայի օգտագործման վրա
 - 4) ջրի թռչունների փետուրների կլանման հատկության վրա
- 45 **Անագի պաշարներով հարուստ է.**
- 1) Նիդեռլանդները
 - 2) Ինդոնեզիան
 - 3) Վրաստանը
 - 4) Գերմանիան
- 46 **Աշխարհում ամենաշատ ջուր սպառվում է.**
- 1) կոմունալ-կենցաղային տնտեսության կողմից
 - 2) գյուղատնտեսության մեջ
 - 3) ջրամբարներում ջրի կուտակման արդյունքում
 - 4) արդյունաբերության մեջ
- 47 **Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.**
- 1) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը
 - 2) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը
 - 3) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը
 - 4) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը

48


Մթնոլորտի ստորին շերտի տաքացումը ջերմոցային գազերի ու երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից կոչվում է.

- 1) ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)
- 2) ջերմաստիճանի տատանման լայնույթ
- 3) ջերմոցային տնտեսություն
- 4) ջերմոցային էֆեկտ

49

Քարտեզի վրա Թեղե-
նիս գագաթը n°-ը տա-
ռով է նշված:

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



50

Քարտեզի վրա Դիլի-
ջան քաղաքը n°-ը տա-
ռով է նշված:

- 1) Զ
- 2) Է
- 3) Ը
- 4) Ե

Բ մակարդակ

51

Հորիզոնի n°-ը կողմն է ցույց տալիս 225° ազիմուտը:

- 1) հյուսիս - արևմուտքը
- 2) հարավ - արևելքը
- 3) հարավ - արևմուտքը
- 4) հյուսիս - արևելքը

52

Ժամը քանիսը կլինի Երևանում, եթե Լոնդոնում ժամը 12⁰⁰-ն է:

- 1) 12⁰⁰
- 2) 15⁰⁰
- 3) 24⁰⁰
- 4) 9⁰⁰

53

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Գիշերվա և ցերեկվա հերթափոխության գլխավոր պատճառը մթնոլորտի շրջանառությունն է:
- 2) Լեռնային շրջաններում ըստ բարձրության մթնոլորտային տեղումների քանակը նվազում է:
- 3) Օդի ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը հասարակածային լայնություններում փոքր է:
- 4) Վերնոլորտը մթնոլորտի Երկրի մակերևույթին ամենամոտ շերտն է:

54

Տրված ապարներից n°-ըն է առաջանում, եթե մագման չի հասնում Երկրի մակերես, այլ սառչում է կես ճանապարհին, երկրակեղևի խորքում:

- 1) կվարց
- 2) գրանիտ
- 3) կերակրի աղ
- 4) այրվող թերթաքար

55

Համաշխարհային օվկիանոսում ներծին (ներքին) ուժերի ազդեցությամբ առաջանում է՝

- 1) տեղատվություն
- 2) ցունամի
- 3) օվկիանոսային հոսանք
- 4) մակընթացություն

56

Մերձարևադարձային գոտու կլիմայի տիպերից որի՞ն են բնորոշ չոր և տաք ամառներ և մեղմ ու խոնավ ձմեռներ:

- 1) միջերկրածովային
- 2) մուսսոնային
- 3) խոնավ
- 4) ցամաքային